

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՅՍՕՐ, ՎԱՂԸ

ԵՒ

ՄԵՆԲ.

Այս րօպէին Արեւելեան խնդիրը գտնվում է մէկ ամենաշոգ լինելով: Այսօր նախընթաց օրն է մեծամեծ դէպքերի, դուրս է մեծամեծ արհաւիրքների, որոնց թատրը զլիսաւորապէս լինելով թիւրքական կայսրութիւնը, թերեւս չը լինի միակը, այլ և դէպքերը տարածվեն մինչև Աւրօպայի կենտրոնն ու արեւմուտքը: Աւ արդարեւ վեց մեծ պետութիւնների, այսպէս ասված, համաձայնութիւնը, կօնցէրտը դառնում է պատճառ սոսկալի ընդհարումների, ճակատագրական կատաստրօֆների: Մեծ տէրութիւնների այդ նշանաւոր համաձայնութիւնը, կօնցէրտն ուղղված է ընդդէմ թիւրքական լծի տակ տանջվող մանր ազգերի և փոքրիկ Յունաստանի: Այս մի կօնցէրտ է, որ բացառապէս կազմված է ծառայեցնելու համար եւրօպական պետութիւնների շահերին Արեւելքում, այդ շահերի մէջ եղած հակառակութիւնների ժամանակաւոր մեկուսացման: Այս մի կօնցէրտ է, որի նպատակն է խուսափել եւրօպական պատերազմից և այդ դիտումով ձիգ թափել ոչ թէ լուծելու, այլ խեղդելու Արեւելեան խնդիրը, գէթ ժամանակաւորապէս: Որովհետեւ լուծել Արեւելեան խնդիրն իսկապէս նշանակում է քանդել թիւրքիայի ամբողջութիւնը և տեղական այլ և այլ ստրուկ ժողովուրդների պատմական ու կենսական իրաւացի պահանջներին ու ձգտումներին տալ բաւարարութիւն, որպէս և տալ վարձագրութիւն նրանց՝ իրանց կրած գերմարդկային տանջանքների փոխարէն: Որովհետեւ լուծել Արեւելեան խնդիրն իսկապէս նշանակում է թիւրքական կայսրութեան հողը բնական ու ազգագրական սահմանագծերով բաժանել նրանում բնակող ազգերի մէջ, դրանց տէր դարձնել քաղաքական իրաւունքների, ընդհանուր ազատութեան, ինքնավարութեան: Բայց մեծ տէրութիւնների կօնցէրտի նպատակն այդ բնական լուծման համար չէ ամենեւին: Ընդհակառակը, եւրօպական կօնցէրտի ներքին ձգտումն ու իմաստը կարանում է այդ բնական լուծման տուջի ամեն արդելք ու խոչնդոտ առաջացնելու մէջ, այդ բնական լուծումն անկարելի դարձնելու մէջ,

և Արեւելեան հարցն այս կամ այն եղանակով մի կերպ փակելու մէջ, մինչև որ կը հասնէ այն յարմար րօպէն, երբ այս կամ այն պետութիւնը կամ պետութիւններն իրանց շահը կը համարեն այլ ևս վերջ տալ թիւրքիային և իւրացնել նրա ամենահամեղ կտորները:

Ահա թէ ինչու համար է, որ այդ եւրօպական կօնցէրտն այսօր կատարում է մի հակամարդկային դեր, պատճառ դառնալով ամբողջ ժողովուրդների սպառման ու կոտորման Արեւելքում: Ահա թէ ինչու համար մեծ պետութիւնների ներքին խտրիւնները, թշնամութիւնները ստեղծում են այնպիսի սոսկալի վեճակ Արեւելքում: Ահա թէ ինչու համար այդ պետութիւններն իրար հետ պատերազմելու երկիւղից սարսափած՝ համաձայնում են միմեանց հետ, իրանց հակառակութիւններին զոհարելով փոքրիկ ազգերին Արեւելքում: Ահա թէ ինչու, մինչև իսկ հակառակ իր պատմական փափագին ու շահին, իւրաքանչիւր տէրութիւն ձգնում է պահպանել թիւրքիայում կատարեալ statu quo: Աւ նրանք քաջ գիտեն, որ իրանց ստոր եսականութեան շնորհով պահպանվող այդ statu quo-ն մահաւոր դատաւճիռ է փոքրիկ ազգերի համար Արեւելքում:

Դա է եւրօպական տէրութիւնների այժմեան քաղաքականութիւնն Արեւելքում. դա է եղել նրանց քաղաքականութիւնն այս վերջին երեք տարւայ ընթացքում շարունակ: Աւ ինչպէս հայկական յեղափոխական շարժումներն այդպիսի աննպատակ հանգամանքների բաղնիքան սրանից առաջ, նոյնպէս միանման հանգամանքների են բաղնիքում յունա-կրէտական շարժումները ներկայումս: Աւ հայկական շարժումների հետեւանքների երկիւղից ծնված ու կազմված եւրօպական կօնցէրտն այսօր անդամալուծվելու ու կազմալուծվելու վրայ է յունական շարժումների պատճառով, որոնց դիմադրութիւնը թէ աւելի քաղաքական բարեյաջող րօպէի հանդիպեցաւ, թէ անհամեմատ աւելի զօրաւոր է և թէ Արեւելի աշխարհագրական նպատակաւոր դերքի շնորհով աւելի սուր, աւելի վաճառական կերպով առաջ է դնում թիւրքիայի ամբողջութիւնը պահպանելու խնդրի անկարելիութիւնը և Արեւելեան հարցի շուտափոյթ ու անմիջական լուծման անհրաժեշտութիւնը: Հակա-

ռակ պարագայում՝ եւրօպական ընդհանուր մէկ ընդհանրման վտանգը հանդիսանում է խիստ ըստ պահանջան ու անխուսափելի:

Այսպէս, հայկական շարժումները խախտեցին ամբողջ թիւրքական կայսրութեան հիմերը և յունական շարժումները հիմա վրայ հասան բոլորովին այն կործանելու ու քանդելու համար: Յունական տէրութեան զգուշաւոր ու խելացի մերժողական պատասխանը եւրօպական տէրութիւնների՝ Նօտա-ի պահանջումներին, յունական տէրութեան վերջնական վճիռը՝ ինքն իսկ լուծելու կրէտական խնդիրը, ազատելով քոյր կղզին (Թիւրքիայի լծից, և եւրօպական պետութիւնների շփոթված ու անվճռական դիրքը դէպի Յունաստանի այդ վճռական ու հերոսական որոշումը — այդ բոլորը տանում են նախ՝ դէպի եւրօպական հիպօկրիտ ու հակամարդկային կօնցէրտի ոչնչացումը և ապա, այդ ուղիով, դէպի Թիւրքիայի տապալման ժամը:

Եւ ահա այդ պատճառներից է, որ այսօր Արևելքը գտնվում է զարհուրելի հրդեհի նախընթաց օրը: Այն լինի՞ արդեօք պատերազմ, իբրև անմիջական հետևանք յունական շարժումների, հէնց այսօր, թէ ամեն ձեռք թափելով եւրօպական տէրութիւնները կառնեն դրա առաջը — ներկայ շփոթ վիճակի միջոցին զփուարանում ենք որոշ պատասխան տալ դրան: Բայց որ այսօր կամ վաղը, և շատ մօտ ժամանակում, պատերազմն այլ ևս անխուսափելի է դարձել Արևելքում, դա, մեր կարծիքով, տարակոյսի չէ կարող ենթարկվել: Եւ եթէ այդ պատերազմի ամենաառաջին նշաններից մէկը յայն ժողովրդի ընդհանուր եռանդն ու փափաղն է (Թիւրքիայի վրայ յարձակվելու, դրա, պատերազմի, ամենագլխաւոր նշանը կը լինի այն ժամը, երբ մեծ պետութիւնների մէջ եղած կօնցէրտը կը խախտվէ ու կը չքանայ, կը չքանայ մի կողմից Յունաստանի բռնած ընթացքի շնորհով և միւս կողմից եւրօպական զայրացած ժողովրդների հասարակաց կարծիքի հարուածների ու յարձակումների պատճառով:

Երբեք մեծ ազատ ազգեր, Ֆրանսիական, անգլիական ու իտալական, իրանց կարծիքի ու զգացման ազատ ու անբռնաբարելի արտայայտութեան իրաւունքի շնորհով՝ արդէն բացարձակապէս յատարարում են իրանց համակրանքը և մինչև իսկ գործակցութիւնն արի Յունաստանին, որպէս և թիւրքական լծի տակ հեծող ժողովրդներին: Ամենայն յոյս կայ, որ այդ երեք ազատ ազգերի կարծիքի, զայրոյթի ու ոգևորութեան ուժգին հոսանքը գուցէ՝ կը տանէ նրանց ուղած ուղիով իրանց կառավարութիւններին, ընկձելով ու ոչնչացնելով այս վերջինների ներկայ եսասէր, շահա-

մոլ ու մարդասպան քաղաքականութիւնը:

Միւս կողմը՝ երեք բռնապետութիւններ, երեք ինքնակալ կայսրներ կը ջանան անդամալուծել երեք ազատ ազգերի հասարակաց կարծիքն ու արդար զայրոյթը և երկաթէ կապանքներով շղթայել իրանց ազգերի զգացման ու կարծիքի ճշմարիտ արտայայտութիւնը, որը չէ կարող, սակայն, ուրիշ կերպ լինել, եթէ ոչ դարձեալ անկեղծ համակրանք դէպի (Թիւրքիայի) տանջվող ժողովրդները, դարձեալ անկեղծ համակրանք ժողովրդների դէպի ժողովրդները, համակրանք որ իրանց երեք միապետների սաղաւարտեայ գլուխների վրայով անցնելով՝ կուղղվէ դէպի անմահ Յունաստանը և դէպի Արէտացին, դէպի Մակեդոնացին, դէպի Հայր...:

Գա՛ն է այն դրութիւնը, որ թուում է կառայանայ իբրև տրամաբանական հետևանք այսօրւան քաղաքական դէպքերից ու հանգամանքներից:

Այն ծանր ու դէպքերով բեղմնաւոր հանգամանքների դիմաց, որ կան ներկայումս, և այն վտանգաւոր, սոսկալի, բայց թերևս ազատութեան գործի յաղթանակի համար յուսալի հանգամանքների դիմաց, որ կարող են առաջ գալ վաղը — դժե՛նք մեր, հայերիս, կատարելիք գործը, դժե՛նք մեր ընթացքը, մեր պարտականութիւնը մեր դատի նկատմամբ: Հիմա վճռական րօպէ է, երբ որոշակի կերպով պէտք է ամբողջ հայութեան առջև առաջ դնել այդ նախագիծը, ի հարկէ իր ընդհանուր գծերով, առանց մտնելու այն կէտերի ու մանրամասնութիւնների մէջ, որոնք հրապարակ հանվել չեն կարող:

Նախ և առաջ պէտք է ընդունենք այն ծրարմարտութիւնը — աւա՛ղ, հին ու բացարձակ ծրարմարտութիւն — որ եւրօպական միջազգային քաղաքականութիւնը կարող է զինումների մէջ մըտնել մի ստրուկ ազգի ազատման ձգտումների առաջ միայն այն ժամանակ, երբ այդ քաղաքականութիւնն իր դիմաց տեսնում է մէկ արդէն կատարված իրողութիւն, մի fait accompli, ինչպէս այդ եղաւ Արէտէի վերաբերութեամբ: Այսինքն այն եղաւ կատարված իրողութիւնը, որ Արէտացին իրապէս իր ձեռքն առաւ, իրապէս տէր դարձաւ իր երկրին, վտարելով կամ յաղթելով իր թշնամիին: Այդ գործը կատարվեցաւ կրէտական ժողովրդի ապստամբութեամբ. ամեն երկրում էլ կատարվել է ապստամբութեամբ և միմիայն ապստամբութեամբ: Այդ տեսակէտից մի հայկական ընդհանուր ապստամբութեան անհրաժեշտութեան նկատմամբ որ և է հակառակութիւն աններելի կը լինի: Յեղափոխութեան, ապստամբութեան զաղափարը հայութեան մէջ այլ ևս վերջնականապէս տարած է իր յաղթանակը, այլ

ևս վերջնականապէս ձեռք է բերած իր պատմական ու կենսական բացարձակ իրաւունքը: Այո՛, և յուսահատութեան ու վհատութեան ողբերը, որոնց իսկական պատճառն է եւրօպական խաբէրայ քաղաքականութիւնը, ո՛չ մի կերպ չեն կարող իրանց թոյնը թափել յեղափոխական գաղափարի ու գործի վրայ, որքան էլ ճղնեն այդ անել մեր խաբէրայ, տգէտ դիւանադէտ ինքնակոչները և մտավախ տխմարները:

Եւրրորդ. մէկ ընդհանուր ապստամբութեան իրագործումը պէտք է տեղի ունենայ մեր դատի լուծման համար նպաստաւոր վայրերում, եւրօպական քաղաքականութեան ամենաշարմար րօպէին և եւրօպական ժողովրդների տրամադրութեան հոգեբանական վայրկեանին:

Եւրրորդ. որոշ պարագաներում մէկ ընդհանուր ապստամբութեան իրագործման պահանջն՝ այսուհետև ինքն ըստ ինքեան այլ ևս ոչնչացնում ու աւելորդ է դարձնում ամեն մասնակի, առանձնակի շարժումների գործադրութիւնը և պայման է դնում զգուշանալու ամեն պատահական շարժումից:

Չորրորդ. մէկ ընդհանուր ապստամբութեան ամենահիմնական պայմանն է ժողովրդի ու հասարակութեան բարոյականի զօրացումը, տրամադրութեան ոգևորութիւնը, եռանդի ու կենսունակութեան արթնութիւնը: Վրանք ամենահզօր պէնքերն են ամեն վհատութեան, ամեն յուսահատութեան, ամեն փնասկար, բացասական երեւոյթների դէմ, երևոյթներ, որոնք ներկայի նման կրիտիկական ժամանակին ճակատագրական վտանգ են: Վրանք ժողովրդի մէջ կառաջացնեն գործելու ու ապստամբելու փափագ ու կարողութիւն, ծնունդ կրտան նորանոր ու անսպառ ոյժերի, շարունակ կառաջացնեն ընդունակ տարրեր ապստամբութեան համար և պայման կը լինեն մէկ ընդհանուր, համանման տրամադրութեան ժողովրդի ամեն խաւերում, հասարակութեան ամեն շրջաններում:

Հինգերորդ. մէկ ընդհանուր ապստամբութեան համար անելիք ամեն մեծ պատրաստութիւնների ու նիւթական ոյժերի, որպէս և ապստամբութեան գործադրութեան համար առաջին ու ամենաանհրաժեշտ պայմանն է՝ ազգային ամեն ընդունակ, յեղափոխական ոյժերի գործունէութիւնը միանման ուղղութեամբ, միանման ընթացքով և մէկ ընդհանուր նախադժով, որի համար պէտք է գործադրվեն միանման միջոցներ՝ միեւնոյն կէտ նպատակին ծառայող: Այդ համատիպ, այդ մէկ և ընդհանուր գործունէութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն պարագային, երբ ազգային յեղափոխական ոյժերը ցիր ու ցան չեն, երբ նրանք՝

համակված միեւնոյն համերաշխութեան ոգով՝ ունեն անկեղծ համագործակցութիւն մէկ և ընդհանուր նախադժով, երբ նրանք կատարում են միատեղի կերպով, միատեղի համաձայնութեամբ մի և նոյն գործը, մի և նոյն աշխատանքը, զօրացնելով միմեանց, աջակցելով միմեանց, կուելով միասին, կազմակերպելով ապստամբութիւնը և ապստամբելով միասին: Ամեն ազգային ոյժեր, ամեն անպայման կերպով գործօն, անկեղծ ու վստահելի յեղափոխական ոյժեր պէտք է այլ ևս ունենան այդ ընդհանուր համերաշխ համագործակցութիւնը, մեծ հարցը, որ քաղաքական ու ազգային հանգամանքներն այլ ևս դարձրել են մի ըստիպողական, մէկ անհրաժեշտ պահանջ: Ամբողջ ազգիս բարոյական ոյժը՝ միացած նիւթական ոյժի հետ՝ պէտք է առաջ գայ, պէտք է ընդունէ իր ամենամեծ ծաւալը, պէտք է կատարեալ կերպով, առանց կեղծիքի, առանց հիպօկրիտութեան, առանց ինքնախաբէութեան, առանց երկչոտութեան, ծառայէ ընդհանուր նպատակին: Թող փոքրիկ Արէտէն և Յունաստանը մեզ օրինակ լինեն: Տասններկու տարեկան երեխան և վաթսուոն տարեկան ծերունի կրէտացիները կուշտ կուշտի տված կուռում են: Հարկւր միլիօնների տէր յոյն Ալէքսանդր իր այդ ամբողջ կարողութիւնն է նուիրում յունահայկէտական սուրբ գործին, և տասնեակներով ու հարիւրներով յոյն Ալէքսանդր շարունակում են իրանց միլիօնները բերել ապստամբութեան գանձարանին: Այդ հրաշալի տեսարանի առջև մենք, այո՛ ամօթ ենք զգում մեր սնապարծ հարուստների համար, որոնք հաւի պէս թուխս նստած իրանց միլիօնների վրայ, ամենաշարմար անտարբերութեամբ ու ինքնախաբէութեամբ անօգնական են թողնում հայ ժողովրդի ճակատագրական ճիգերը և իրանց զգուշի շահասիրութեամբ ու վատ եսասիրութեամբ պատճառ դառնում ժողովրդի կոստեան: Ուշքի կը գա՞ն նրանք արդեօք դէթ հիմա. ցոյց կը տա՞ն նրանք արդեօք յոյն հարստի եռանդի դէթ հարիւրերորդ չափը...

Եւ ամբողջ յոյն ու կրէտացի ժողովրդները, ոգևորված ազատութեան միեւնոյն զգացումով, Յոյնը Արէտացիին եղբայրական ձեռք կարկռելով, միեւնոյն եռանդով ու միեւնոյն յուսով տողորված, ազգը, ամբողջ ազգը մէկ դարձած, մէկ՝ սրտով, մէկ՝ գործով, մէկ՝ յաղթանակով, մէկ՝ մահով — այսօր ամբողջ աշխարհին պատճառել են զարմանք, հիացում մինչև զգածվելու, արտասովելու աստիճան:

Բժպէն ճակտագրական է. մենք էլ իմանամք մեր անելիքը և մեր պարտականութիւնները:

Պատռենք ու շարտենք մեր միջեց այն բոլորը, ինչ փնասկար, պառակտող, ստոր ու դաւաճան

է, և միասնական մի և նոյն շունչի ու ոգևորութեան մէջ այն ամեն արին, բարձրն ու օգտակարը, որոնք մեզ կը տան բաւական ոյժ՝ կատարելու մեր մարդկային ու ազգային պարտականութիւնը, մեր պարտականութիւնը դէպի մեր հայրենիքի ու ժողովրդի ազատութիւնը:

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆ ԶԵՐԹՈՒՆԻՑ

(Շարունակութիւն*)

Սոյն դէպքերէ յետոյ քաղաքի մէջ բնակող մօտ 30 տուն թիւրք բնակիչները և մի քանի ժամ հեռաւորութեամբ շրջակայ թիւրք գիւղացիները Զէյթունցիներու ձգելով իրենց բոլոր անշարժ հարստութիւնները՝ տներ, կալուածներ, պարտեզ ևն, ևն, գաղթեցին Ալպիսթան, Եարփուզ, Կոկիսօն և ուրիշ վայրեր: Կոկիսօնի բաբերը և ընդարձակ լեռնադաշտերը, որոնք դեռ հազիւ մի քառորդ դար առաջ ամայի, անմշակ էին և միայն Պաշարճըգի աւաւները տարւայ մէջ 3-4 ամսով կը բարձրանային, վերջին ժամանակներս թրքական կառավարութեան մասնաւոր կարգադրութեամբ չէրբէզ և չէչէն լեռնականներու բնակավայր էին դարձած: Այս տարի հարկւրաւոր չէրբէզներ, խումբ-խումբ, իրենց ընտանիքներով միասին, գաղթեցին և դեռ շարունակաբար կը գաղթեն դէպի Դամասկոս կամ Տըրուզներու ամառացեաց լեռները: Զէյթունի ապստամբութիւնը և իրենց չարաչար պարտութիւնը խիստ վատ ազդեցութիւն ունեցած է իրենց վրայ և այդ է եղած միակ պատճառը սոյն գաղթականութեան:

Տեղացի թիւրքերը, որոնք լաւ գիտեն լեռնային ճանապարհները, և փախուստի միջոցները, միայն Զէյթունցիներուս վնաս տալու և վրէժ լուծելու համար գաղտնի կերպով կը դողանային հայերու ձիւրը, ջորիները տաւար ևն, ևն և կը տանէին Ալպիսթան: Նախապէս հայերը կասկած չը կրեցին և չէին ալ սպասեր տեղացի թիւրքերէն: Գայմագամին բողոքեցին և պահանջեցին, որ հարկ եղած հսկողութիւնը անէ և այս անտեղութիւններու առաջին տունէ: Գայմագամը պաշտպանեց թիւրքերը՝ առարկելով թէ՝ անոնք անկարող են և համարձակութիւն չունին ձեր անասունները գողանալու: Հաւանական է թէ հեռաւոր քիւրտեր եղած լինեն: Մի տանեակ կտրիճներ հետամուտ եղան անպատճառ այս աւաղակներու ուղբեր լինելը հասկանալ, և Երէճէքի ճանապարհի վրայ մի յարմար տեղ զինուած սպասեցին մի քանի օր: Ի վերջոյ, մի գիշեր կը յաջողին հանդիպել այդ աւաղակներուն, որոնք Զէյթունէն գաղթած թիւրքեր էին և գողանալով մի քանի ձիւր ու ջորիներ՝ կը հեռանային: Զինուած կտրիճները յանկարծակի կը յարձակին թիւրքերու վրայ. անոնցմէ մէկը կսպանուի և մնացածները խոյս կը տան: Հայերը առնելով անասունները ուրախութեամբ կը վերադառնան Զէյթուն և եղելութիւնը նոյնութեամբ կը պատմեն նաև գայմագամին:

Հոկտեմբեր ամսի մէջ Զօրանոցի վերաշինութիւնը վերջացած էր: Այրուած զօրանոցի հիմքերու վրայ կառուցին նոր պատեր և վերելի շէնքը. նախորդ շինուածքէն քիչ աւելի մեծ է, դարձեալ երկու դուռ ունի, առաջինը Զէյթունի կողմը, երկրորդը արևելեան,

որը կը կոչուի Մարաշի դուռ: Օգտուելով նախորդ դէպքերէն, թիւրք կառավարութիւնը զօրանոցի մէջտեղը բացել տուաւ բաւական մեծ և խորը մի ջրհոր, որը մի քանի շաբթւայ միջոցին ամբողջովին լեցեցաւ ջրով: Այժմ զինւորներու պէտքերու համար կը գործածեն այդ հորի ջրէն: Շէնքի ներքին մասերը ամբողջացնելէ յետոյ կառավարութիւնը ուշագործութիւն դարձուց արտաքին յարձակումներէ կամ պաշարումէ ապահով լինելու խնդրոյն: Զօրանոցի շուրջը գտնուած բոլոր մեծ ու փոքր ժայռերը, որոնք ապստամբութեան միջոցին, իբր մարտկուներ կամ զուլաներ, մեծ օգտակարութիւն մատուցին զէյթունցիներուս, վառօթով ջարդել և մօտակայ ձորերը լեցնել տուաւ: Պարիսպներու շինութեան և այլ և այլ աշխատութիւններու համար Մարաշէն բերուած էին 30-40-ի չափի հայ գործաւորներ, որոնք զինւորներու հետ միասին կը գործէին: Ոչ մի Զէյթունցի աշխատելու չը գնաց սոյն շինութեան համար: Կառավարութիւնը ջանքեր քաշաւ, օրավարձը աւելցուց մասնաւորապէս զէյթունցիներուն համար, սակայն դարձեալ մի զէյթունցի իսկ չը գրտնուեցաւ, որ դիմէր և աշխատանք խնդրէր: Այս բոլոր ծանր գործերը առաջ կը տանէին զինւորները, որոնք գլխաւորապէս Ատանայէն, Թարսուսէն և Հալէպէն էին: Անկապագրելի է անոնց չարքաշութիւնը, խեղճութիւնը ամառայ տաք օրերու մէջ: Կը դիմէին հայերուս և կը խնդրէին այն հին կողիկները, զգեստները, որոնք գրաւուած էին իրենցմէ կամ զօրանոցէն պատերազմներու միջոցին: Գժգոհութիւնը ու ղայրոյթը դէպի սուլթանը և իրենց զօրապետները սաստիկ է և շատեր անկարող լինելով տանել այս կեանքը փախուստ կը տան իրենց երկիրները:

Վաղաքի կառավարական շէնքը, առանց բնակութիւն հաստատուած լինելու, նոյն կերպով քանդուած, աւերուած վիճակի մէջ կը գտնուի: Սենեակները և պատերու վրայ սպաննուած զինւորներու արիւնի հեքերը կը մնան և կառավարութիւնը ոչ մի ջանք, հոգ չի աներ մաքրելու կամ վերանորոգելու համար: Արեւմտահայ հեռաւոր տեղերէ, մինչև Արաբիայէն, Շամէն, Հալէպէն՝ կոտորուած զինւորներու ազգականները, ծնողները կամ բարեկամները Զէյթուն կը գան և որպէս մի ուխտատեղի աղօթք կանեն, կը համբուրեն այդ շէնքի պատերը:

Ապստամբութեան միջոցին Զէյթունի սահմաններէն հեռի գտնուած բաղմաթիւ հայ գիւղեր, որոնք անկարող եղած էին ապաստանիլ Զէյթուն, սարսափների և կառավարական բացարձակ հալածանքների տակ ընկճուած, ստիպուած կրօնափոխ եղեր և իսլամութիւնը ընդունել էին: Ապստամբութիւնէ յետոյ, երբ ժողովրդի յարաբերութիւնները մշակուեցաւ և երկրի դրութիւնը բաւականին մեղմացաւ, այդ իսլամացած բաղմաթիւ հայ ընտանիքները դիմեցին Զէյթուն և խնդրեցին պաշտպանութիւն անել իրենց անպայման կերպով: Այս առթիւ Զէյթունի աղաներէն և կղերականներէն մի քանիսը պտոյտի ելան շրջակայ բոլոր գիւղերը, ջանացին հայ և թուրք հասարակութիւններու մէջ համերաշխութիւն առաջացնել, դէպի իրենց ազգութիւնն ու կրօնը վերադարձող հայերուն գիւրութիւններ տալ, և ամենէ գլխաւորն է, բաւական թուով հայ աղջիկներ ու հարսներ, որոնք յափշտակուած էին հեռաւոր վայրերէ և թիւրքերի հետ նիքեհեղած, յետ բերին Զէյթուն և հայերու հետ վերստին պը-

*) Տես «Հնչակ» 1897. № 2.

սակել տուին:

Զմեռայ սկիզբները յայտնի Հելվելիցի կարապետ անուն կարիճ երիտասարդը մի քանի ընկերներով կը յարձակի թիւրք տէրէպէտի Եայիճ օղլուի մարդոց վրայ՝ որոնք կարճ հրացանաձգութենէ յետոյ, թողած իրենց տաւարներն ու մալերը, փախուստի կը դիմեն: Քաջ Հելվելիցին թշնամու տաւարները միասին առած կը վերադառնայ: Այս և ասոր նման մի քանի ուրիշ դէպքեր ահագին աղմուկ և երկիւղ կը յարուցանեն թիւրք ժողովրդի մէջ: Մարաշի կառավարութիւնը մեծացնելով այս ամենը կը հեռագրէ Պոլիս: Մի քանի օր յետոյ, Մարաշի միւթէսարիՖի թելագորութեամբ, Մարաշի ազգայիններէն երկու տէրտէր և երկու-երեք աղաներ, իբր պատգամաւորներ, կուղարկուին Զէյթուն՝ ժողովրդին խրաւելու և հաւատարմութեան հըրաւիրելու համար: Զէյթունի հասարակութիւնը երբէք կարեւորութիւն չը տուաւ սոյն Մարաշիի աղաներուն ու տէրտէրներուն, որոնք ամեն անգամ, մի միայն երկիւղէն ներշնչուած, պատրաստականութիւն են ցոյց տուած թիւրք կառավարութեան ձեռքը գործիք դառնալու՝ ի վնաս հայ ժողովրդի շահերին: Հելվելիցի կարապետը իր ընկերներով ձերբակալուեցաւ և Զէյթունէն Մարաշ տարուեցաւ:

Այս միջոցներն էր արդէն Զէյթուն հասաւ մի յոյն, Եուփանաքի անունով, քրիստոնէայ գալմագամը, որու գալը մեծ աղբեցութիւն և ոգևորութիւն առաջ բերաւ Զէյթունցիներու և հայ գիւղացիներու մէջ: Այս նոր, քրիստոնէայ գալմագամը առ այժմ բաւական ըզգոյշ և խոհեմ դիրքի մէջ դրած է իրեն, Նա կարողացած է ժողովրդի համակրութիւնը գրաւել. թիւրք կառավարութեան և Զէյթունցիներու մէջ տեղի ունեցած մի քանի կարեւոր խնդիրներու միջոցին աշխատեցաւ ի նպաստ հայ ժողովրդի շահերին գործել. բաւական ճիգեր կը թափէ ինչքան կարելի լինի, իրագործել տալ բանակցութեան պայմանները:

Նոր գալմագամի պաշտօնի գլուխ անցնելէ յետոյ Մարաշի կառավարութիւնը և մասնաւորապէս Ալի փաշան բաւական մեղմացուցին իրենց ընթացքը, որով հանդարտեցաւ ժողովրդի յուզուած ու գրգռուած գրու-թիւնը: Ալի փաշան Պօլսէն և Հալէպէն ստացած յատուկ պատուէրների համաձայն, որը յետոյ մեզ յայտնի եղաւ, խնդրք կազմեց և հրաւիրեց Զէյթունի նշանաւոր անձնաւորութիւնները: Այդ խնդրքի մէջ կը խօսէր, մասնաւորապէս որ Զէյթունցիները հաշտ ապրեն սուլթանի կառավարութեան հետ, հաւատարիմ և հարազատ լինեն ևն, ևն: Առ այժմ կառավարական մի քանի պաշտօններու համար նշանակուեցան տեղացի հայեր և մնացածներն ալ պիտի նշանակուին հետզհետէ:

Այրուած հայ գիւղերը կը վերանորոգուին և արդէն գիւղացիները շատոնց վերադարձած են իրենց վայրերը: Տարիներ առաջ Հալէպի և Մարաշի մէջ բանտարկուած Զէյթունցիները ազատուելով գարձան իրենց տունները: Յորեն, գարի, ալիւր ևն, ևն շատ աժան են, որովհետեւ ամեն կողմէ առատ բերին Զէյթուն, սակայն, ժողովուրդը նիւթապէս բաւական նեղ վիճակի մէջ է: Կարմիր-խոշի ընկերութիւնը սկիզբէն մինչև այժմ բաւական օգնութիւններ արաւ՝ ցորեն, գարի, ալիւր և երբեմն դրամ բաշխելով հասարակութեան: Զէրբէզները շատ համերաշխ կապրեն մեզ հետ և կը զղջան, կափսոսան, որ յիմարութեամբ լըսելով սուլթանի հրաւերներուն և մոռանալով նախ-

կին պայմանները՝ պատերազմեցան Զէյթունցիներու դէմ և այդ պատճառով այնքան անհամար զոհեր ևս տրւին:

ՀՐԴԵՀ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԻՆԿԻՆՏԻՑ

24 Յունուար 1897.

Թիւրքական զինւորները, իրենց սովորութեան համեմատ հայ գիւղացիներու բաղմաթիւ հորթերն ու կովերը կը գողնան և անոնց կէսէն աւելին նոյն օրը կը մորթեն: Անասուններու կաշիները գտնուեցան վրաններու մէջէն: Սոյնօրինակ գողութիւններ բաղմաթիւ են և կը գործադրուին նոյն իրենց՝ հաղարապետի և ուրիշ բարձրաստիճան պաշտօնեաներու հրամայով ու գիտակցութեամբ: Երկրի, նամանաւանդ ներքին գաւառներու մէջ թրքական կառավարութիւնը կաղմակերպուած մի աւաղակային խումբ է, բաղկացած անբարոյական և անօթի պաշտօնեաներէ, որոնք սուլթանական բարձր կարգադրութեամբ և նիզամի ու շէրաթի միջոցով, բացարձակօրէն, կը կեղեքեն ժողովուրդը և կը թալանեն անոնց ունեցածը:

Յունվար 5-ին Պոլսի աղ պահականցի կից և հին ժամանակներէ մնացած ծովեղբերայ փլատակներու մօտ տեսնուեցաւ մի գիակ, որը խեղդուած էր և վերայէն յունական մի փաշափօրթ գտնուած:

Յունվար 10-ին առաւօտը եղբրու ախոռատան մէջ գտնուեցաւ Կէօք Փանոսեան Սիմօնի սպաննուած գիակը: Ի վերջոյ յայտնի եղաւ, որ զօրքերը խեղդած և այդտեղ կախած էին: Կառավարութիւնը նոյն դէպքի մասին պաշտօնապէս հարցում ըրաւ սպաննուածի եղբորը՝ մուխթար Յովսէփին, որը երկիւղէն պատասխանեց թէ՝ եղբայրս ինքզինքն է կախեր, ոչ ոքի վրայ կասկած չունիմ: Յովսէփը երկչոտ, անպատիւ և սրիկայ մի մարդ է, որի պատճառով շատեր կասկածելի եղած են թուրք պաշտօնեաներու աչքին. իսկ սպանուած եղբայրը Նաճառլի գիւղի առաջին կարիճ-ներէն էր և նշանաւոր որսորդ: Նոյն օրը Երզնցի մի թուրք հրացանի գնդակով մի քանի տեղէ վիրաւորեց Մարաշի Նազարէթ Մօսքօֆեան, որը կիսամեռ վիճակի մէջ բերուեցաւ հաղարապետի մօտ:

Կառավարական պաշտօնեաներու, հարկահաւաքներու և մուլեանդ թիւրք խուժանի հասուցած վնասները, ճնշումը, հարստահարութիւնը չափազանցու-թեան են հասած: Հակառակ ժողովրդի և գիւղացու ծայրայեղ չքաւորութեան, տնտեսական վիճակի կատարեալ քայքայման, նորանոր տուրքեր, ինչպէս անտառային, ծխախոտի՝ գնալով հետզհետէ կը ծանրանան հասարակութեան ուսին վրայ. ժողովուրդը այլ ևս անկարող կը դառնայ տանել սոյն անտանելի կացութիւնը... Թիւրք կառավարութիւնը լրբաբար իր թերթերու միջոցով կը հրատարակէ թէ երկրի ամեն կողմերը անդորրութիւն ու բարեկեցութիւն կը տիրէ, բարենորոգումները գործադրել սկսած են, քրիստոնէայ պաշտօնեաներ և պահապան ոստիկաններ կը կարգուին Ինչ ամենաստոր խաբէբայութիւն... մի՞թէ կարելի է սպասել սուլթանէն մի ակնկալութիւն, մի բարի գործ: Վերջերս Պէսնիէն առնուած ստոյգ մի լուրի համաձայն, այդ տեղ նշանակուել են 5 հայ ոստիկաններ, որոնք կառավարական գործերու համար մեկ-

ներ են գիւղերը. թիւրքերը մի քանի պաշտօնեաներու մասնաւոր թելադրութեամբ անոնցմէ 3-ը կը դըլ-խատեն և երկուսին ալ ականջները կտրելով նախատինքի համար կուղարկեն քաղաք: Ահա սուլթանական րէֆօրմներու ամենափոքր մի նմայը:

12 Յունուար 1897.

Վեկտեմ. ամսի 23-ին տեղս հասաւ վաղուց ի-վեր սպասուած հրամանատար փաշան, որու մասին զա-նազան տարաձայնութիւններ կը շրջէին հասարակ ժո-ղովրդի մէջ: Նա միայն մէկ օր մնաց և հետեւեալ օ-րը մեկնեցաւ: Սուլթանի այս պաշտօնեայի գալուստը տարօրինակ ապաւորութիւն առաջ բերաւ ամեն կողմ թիւրք հասարակութեան մէջ: Մահմետական կրօնամօլ խուժանը նկատելի կերպով փոխուեցաւ և դէպի հա-յերը ունեցած ատելութիւնը, թշնամութիւնը յայտնի և յանգուգն կերպարանք ստացաւ: Հրամանատար փա-շան արագ կերպով շրջան կը կատարէր մեծ գիւղերը, քաղաքները և կարեւոր վայրերը՝ ճիշդ այն եղանակով, ինչպէս Ատանայի կուսակալը՝ 95 հոկտեմ. ամսին, կո-տորածի ու սարսափի օրերէն քիչ առաջ: Նա ամեն տեղ կը քարոզէր, կը գրգռէր թիւրքերին թէ, «հայ-րենիքի ներկայ վիճակը վտանգալի է. Վեափուրները կը ջանան ձեռք անցնել երկիրը. փատիշահի կամքը բարձր է իսլամներու համար, պատրաստ եղէք...» Մի քանի հայ աղաներ գնալով փաշայի մօտ ներկայա-ցուցին ժողովրդի աղքատ, խղճալի վիճակը և խնդրե-ցին ուշադրութիւն դարձնել: Սակայն նա ծիծաղե-լով հետեւեալ պատասխանը տուած է: «Սպար էտին. եսզ կէլիր չայըըլար պիթէր, հէմ հայվալարընըը թափլանըը հէմ սիզ»: (Համբերող եղէք. ամառը կը գայ, խոտերը կը բուսնին, թէ ձեր անասունները կը գիրանան և թէ դուք): Շատեր կը կարծէին թէ նա բանենորոգիչ մի պաշտօնեայ է և ուղարկուած է մաս-նաւոր կերպով երկիրը բարենորոգելու, խաղաղեցնե-լու համար. սակայն այժմ հասկացան որ նա եկած է մասնաւոր նպատակով թիւրքերը և քիւրտերը գրգռել, պատրաստել և նորանոր ջարդեր ու սարսափներ ա-ռաջացնել հայերուս մէջ:

Փաշայի եկած օրն էր, որ Մարաշի մի ջորեպան թրքական գիւղէն անցած միջոցին՝ բնակիչները յարձա-կեցան վրան առանց ու և է պատճառի և քարով, փայ-տով, բահով աստիկ կերպով ծեծեցին և մի քանի ականները հանեցին:

Նոյն օրը զինուորները գիւղի շուրջը արածող ար-ջառի հօտէն մի քանի հատ քշեցին և զենելով կե-րան: Դարձեալ նոյն օրը զինուորներու ձեռքով մի քա-նի գողութիւններ ևս գործուեցան, որոնց համար բո-ղբուեցաւ իրեն՝ փաշային, սակայն հետեւեալը եղաւ՝ անուշադրութիւն և արհամարհանք:

Վեկ. 27-ին կէս օրուայ միջոցին, Օճափը բնա-կող Բայասցի Արթինը իր կնոջ և ուրիշների հետ միասին գիւղի եղբրը ելած էր մացաւ, չոր փայտ հա-ւաքելու համար: Ատոնցմէ հինգ վայրկեան հեռաւորու-թեամբ կը գտնուէին մի տասնեակ զինուորներ, իբր գիւղը պաշտպանողներ: Հակառակ կողմէն մի քանի զինուած թիւրքեր երեւան գալով՝ յանկարծակի հրա-ցանները կը պարպեն հայերու վրայ: Մի գնդակի հա-րուածով կը սպաննուի Արթինը, որը տեսնելէ յետոյ չարագործները խոյս կը տան: Նոյն օրը 2օր-Մարզուան

կը գտնուէր Բայասի գայմազամը և հազարապետը: Սպաննուածի աղբախանները բողբեցին և խնդրեցին յանցաւորներու պատժուիլը: Գայմազամը և միւս պաշ-տօնեաները կը ծիծաղէին և ոչ մի փոյթ, ոչ մի ջանք չէին աներ մարդասպանները ձերբակալելու. համար: Սոյն դէպքը մեծ աղբեցութիւն թողուց հայերու վրայ. վրէժխնդրութիւնն ու զայրոյթը միաժամանակ կը տի-րէին և մեծ տեղ կը դրաւէին ժողովրդի սրտի մէջ:

Սոյնօրինակ դէպքեր ամեն օր անպակաս են և վերջին ժամանակներս, կառավարական պաշտօնեաներու յայտնի քաջալերութեամբ, աւելի ծանր կերպարանք են առած: Թիւրք հասարակութիւնը, կառավարութեան մաս-նաւոր կարգադրութեամբ, զինուորուած, պատրաստի դը-րութեան մէջ կը գտնուի. չը կայ մի հասարակ մահ-մետական, որը անդէն լինի. ամբողջ երկիրը պատե-րազմական վիճակի մէջ է: Հրամանատար փաշայի այս կողմերէն մեկնելէ յետոյ՝ թիւրքերը բացարձակ կեր-պով կը խոսեն թէ, նա մասնաւոր կերպով ուղար-կուած է սուլթանի կողմէ՝ մահմետական ժողովուրդին հաղորդելու կարեւոր հրահանգներ, մասնաւոր նպատա-կով կը շրջի գաւառները թիւրք ժողովուրդը հայե-րու դէմ գրգռելու և պատրաստելու համար: Թիւր-քերը մի հանրագիր պատրաստելով ուղարկեցին սուլ-թանին, որով յայտներ են իրենց հաւատարմութիւնը և պատրաստակամութիւնը: Ահա այս բոլորը առիթ դարձան հայերու և թիւրքերու մէջ վերատին թշնա-մութիւններ երեւան գալուն: Ալէքսանդրէտի ծանապար-հը հետզհետէ երկիւղալի և անապահով կը դառնայ և հաղորդակցութիւնը կը դադարի. խուժը խուժը թիւր-քեր զինուած կարեւոր անցքեր կը կտրեն. ծանապար-հօրդ հայերուն վնասներ կը հասցնեն, նեղութիւն կը տան և կը կողոպտեն շատ անգամ:

Սեափուր Տաղի (Հայ-Վեո) հայերուն ներկայ վի-ճակը և թշուառութիւնը աննկարագրելի է: Հայ գիւ-ղացիները իրենց առօրեայ ապրուստի պէտքերը հոգա-լու համար անկարող կը լինին երթալ շրջակայ գիւ-ղեր կամ քաղաքներ և աշխատանք ու միջոց գտնել ապրելու համար. գրեթէ պաշարուած և բանտար-կուած են իրենց գիւղերու կամ տներու մէջ: Ժողովրդի մեծամասնութիւնը խոտերով և վայրի պտուղներով մի-այն կապրին: Խսկ կառավարութիւնը, առանց հոգս ա-նելու ժողովրդի այս բոլորովին ինկած, քայքայուած կացութեանը, միմիայն հայերը փճացնելու, ոչնչացնելու բացարձակ դիմուժով կը գործադրէ ամեն տեսակ հը-րէշային գազանութիւններ, կը գրգռէ, կը խրախուսէ թիւրքերը, քիւրդերը, որոնց հասուցած վնասները, թա-լանում, սպաննութիւն չափ չունին այլ ևս: Կառավա-րութեան բարեխիղճ պաշտօնեաները, սուլթանի խիստ հեռագրի համաձայն, հայ գիւղացու իւրաքանչիւրի տունը կը պտտին, կը հաւաքեն անոնց կերակուրի հողէ ամանը, պատառոտուած անկողինը, հողագործի պի-տանի գործիքը և ծախելով անոնց տուրքերի փոխարէն կը գանձեն: Հայ-Վերան շուրջը գտնուած մօտաւորապէս չորս հազար տուն հայ բնակիչները, որոնց բոլորի զէնքերը անցեալ տարի գրաւուեցան կառավարութեան կողմէ, այժմ զրկուած ինքնապաշտպանութեան այդ միակ մի-ջոցէն, ամեն վայրկեան կը գտնուին նորանոր ագէտնե-րու, արիւնալից դէպքերու խղճալի անմեղ զօհ բար-բարոս խուժանի կատաղութեան և վայրագ կրքի առջև:

Ատանայի մէջ մեծ խռովութիւն պատահած է Վա-թողիկոսական ծանօթ խնդրի պատճառով. սակայն ման-

րամանութեան մասին ստորգ տեղեկութիւններ դեռ
ևս կը պակասին:

ԵՐԿՈՒ ՎԿԱՅԱԹՈՒՂԹ

ԱԼՖԱՐԻԱ-ԱՐՓԻԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

I.

“Երբեք զետեղում ենք երկու վկայութիւն, որոնց
մէջ պարզորոշաբար երեւում է թէ ինչ պտուղներ են
դաւաճան ու մասնիչ Արփիարեանի արբանեակները:
Իսկական ստորագրութիւնները, որոնք գրված են այդ
վկայութիւնների տակ, յայտնի պատճառներով անկարող
ենք տպագրել: Այդ վկայութիւններն ուղղված են մեզ
և մենք նրանց զետեղում ենք “Հնչակում” ուղար-
կողների կրկնակի խնդիրների համաձայն:

“Առ...”

“... Վատարանէն տասն և հինգական տարի բեր-
դարգեղութեան դատապարտուած էինք շնորհիւ Ան-
տոն Ռշտունիի մատնութիւնների. այդ դաւաճան
պարունը դաւաճանեց Մանճըրնցի Պօղոսին և Բա-
նոսին՝ մատնելով կառավարութեան. հերոս ճանօ
Սիրանոսեանը հինգ ընկերներով ինչ ինչ տեղերէն
հալածուելով՝ Հասրեղ կամուրջը գրաւեց. այդ տեղ
զոհ տուին ճանօն. ապա հատաւ իրենց ռազմավար-
ւը և մի քանի ծանօթների առաջնորդութեամբ ձեր-
բակալուեցան հինգը: Ասոնց յայտնի մատնիչն էր Ռշ-
տունին: Նոյն Ռշտունին, որ կիւրացներ Կառակցու-
թեան անուան՝ իրեն յանձնուած գումարները. մինչև
անգամ յանդգնեցաւ. նաև թորոս Դառուկեանի
և Կիւլպէնի Համալեանի համար հասած գու-
մարը իւրացնել անխղճօրէն, և անոնք 3 օրւայ անօ-
թիւներ էին, երբ կախաղան հանուեցան, և նոյն իսկ ա-
նոնց մատնողը ինքն էր. չի մատնածը չը մնաց... Հա-
յաստանցի կտրիճներ մատնեց կառավարութեան ան-
գութ ճիրանին. նա լուր տուաւ զէնքերի և ռազմա-
վարներէն պահուած վայրերը. նա յայտնեց ընկերա-
կան և Կուսակցութեան ներքին գաղտնիքները փա-
սակար անձանց, մինչև թրքաց...”

“Այժմ ժամանակը աւել է, պիտի մեկնինք այս-
տեղէն. յետոյ կը գրենք աւելի մանրամասնօրէն: Չորս
տարի է զանազան բանտերու և վերջերս... բերդի մէջ
աննկարագրելի և աներեւակայելի տանջանքներ կրելէ
յետոյ ազատուեցանք. փառք Ստեղծողին. տեսանք աշ-
խարհ՝ կրկին գործելու միւսնոյն Գրօշի տակ...”

ՎԵՑ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ.

II.

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՕՆԻՆ

Յայտնի է թէ Աղասի — Հասօ անուն անձը
Չէյթունէն վերագառնալէ յետոյ, միմիայն շահախնդ-
րական միտումներով միացած է Արփիար Արփիարեանի
և ասոր նման քանի մը ազգագաւ մարդկանց հետ, ո-
րոնք թուրք կառավարութեան կողմէ վարձուած և կա-
շառուած յայտնի լրտեսներ են: Աղասի — Հասօն քաջ
գիտեմ, կը ճանաչեմ և կը փափաքիմ յանուն ճշը-
մարտութեան, յանուն Յեղափոխական գործի անոր
նկատմամբ մի քանի ճշմարիտ տեղեկութիւններ տալ և
զգուշացնել հայ հասարակութիւնը՝ չը խաբուիլ այդ
մարդու խաբեբայութիւններէն, սուտերէն և շարլադա-
նութիւններէն:

1895-ին Աղասի — Հասօն կը գտնուէր Սուէտի-
այի կողմերը: Ես ինքս տեղեկ եմ անոր բոլոր գոր-
ծերուն և ունեցած ընթացքին, Սուէտիայի մէջ իր
անձնական կրքերու և հաշիւներու համար նա սպան-
նած է մի քանի անձնուէր և անկեղծ անձնաւորու-
թիւններ, որոնք յեղափոխական գործի շահի տեսակէ-
տով շատ կարեւոր և օգտակար էին: Նա իր տղայա-
կան և անընդունակ գործունէութեան շնորհիւ Կիլիկի-
այի մէջ շատ յաջողութեանց և շատ յաղթութեանց
խանգարելու պատճառ հանդիսացաւ: Արեւիքն ժամա-
նակները Սուէտիայի ժողովուրդը տեսնելով իր խաբէ-
ութիւնները, մեծ-մեծ ստախոսութիւնները, փնասակար
ընթացքը մտադիր էր իրեն սպաննել. սակայն ինք հա-
կանալով այդ՝ խոյս տուաւ Այնթապ: Այնթապի կող-
մերը Աղասին, Հնչակեան Կուսակցութեան անունով, կը
շահագործէր հայ հարուստները և ժողովուրդը. իր օ-
րերը կանցներ ամենազեղիս, անբարոյական և անպատիւ
կերպով: Այդ միջոցները Հրաչեան Չէյթուն գտնուե-
լով կը կազմակերպէր և կը նախապատրաստէր Չէյթ-
ունի ապստամբութիւնը: Չէյթունի ապստամբութենէ
հաղիւ 8 օր առաջ, 95 հոկտեմբեր ամսոյ առաջին
շաբաթը, Աղասին Այնթապէն խոյս տալով, միայն իր
կեանքը փրկելու համար, մեկնեցաւ Չէյթուն՝ Հրաչ-
եայի մօտ, ինչ ատեն արդէն Հնչակեան Կառավարու-
թիւնը հաստատուած էր Չէյթունի գաւառը և յե-
ղափոխութեան դրօշը բարձրացած: Չէյթունցիք չէին
ճանաչեր երբեք Աղասին, սակայն տեսնելով որ Հը-
րաչեան կը ճանաչէ և կը ներկայացնէ իբրեւ իր ընկե-
րը, իրենք ևս ընդունեցին հաւատարիմ գործիչ: Գեղ-
տեմբեր ամսոյ առաջին օրերը, պատերազմի խիստ տաք
ժամանակը, երբ ընկերները ֆրոնտը և ուրիշ կող-
մերը պաշարուած դրութեան մէջ կը գտնուէին, Աղա-
սին իր կեանքը փրկելու համար, Տաշուլզգիի Ղօճա-
ին և Ալապաշիի Պապիկին գաղտնի կերպով 40
ոսկի կը (սոստանայ) իրեն գիշերանց փախցնել և ա-
պահով վայրեր անցնել. սակայն Չէյթունցիք իմանա-
լով՝ սպառնալիքով արգիլեցին: Իսկ երկչոտութեան և
խաբեբայ ընաւորութեան պատճառով Չէյթունցի ա-
ղաներու մէջ երկպառակութիւն ինկաւ և քիչ մնաց
Չէյթունի գրաւման և կոտորման առիթ գառնար: Բա-
նակցութեանց ժամանակ խիստ մեծ հարուած տուաւ:
Պայմաններու կնքուելէ առաջ նիւթական ինչ-ինչ ա-
կընկալութիւններով հիւպատոսաց թարգմաններուն և
մի քանի թիւրք զինւորականաց պատմեց թէ՝ Չէյթուն
անկարող էր նոյն իսկ դիմանալ... Նաև պատմեց նա-
խորդ գումանտար Բէմզի փաշայի ինպատո Չէյթունի
ունեցած մի քանի ռազմագիտական սխալները և Չէյթ-
ունի տկար կողմերը... Չէյթունցիներս երբ լսեցինք
այս ամենը շանթահար եղանք: Նաև Չէյթունէն մեկ-
նելէ մի օր առաջ Ալի փաշային ըսած է թէ՝ Չ-
րանոցէն գրաւուած մարթինի հրացաններու մեծ մասը
յանձնուած է Կարկալարի թաղապետ յայտնի Կարա-
պետ Տէր-Յակոբեանին, իսկ փոքր մասը ֆրոնտըի ա-
ռաջնորդ Բարդուղիմէոս վարդապետին, որպէս և ա-
պագային գործածելու համար այն ինչ քարայրի մէջ
պահուած կան երկու-երեք հակ փամփուշտներ: Հե-
տեւալ օրը Ալի փաշան բերել տուաւ փամփուշտնե-
րը և իր մօտ կանչելով Վարդապետը ու Տէր-Յա-
կոբեանը պահանջեց հրացանները: Այս գեղեցիկ առիթ
էր Ալի փաշային Կ. Տէր-Յակոբեանին փնասելու և վը-
րէժ լուծելու համար, որը ընդհանուր ապստամբու-

Թեան անձնութեամբ գործակցած և երկար շաբաթներով կարկալարի արևմտեան կողմը իրեն՝ փաշային՝ դէմ քաջութար կռիւ էր մղած իր թաղի հարկւրաւոր քաջերով միասին:

Այժմ Աղաթի-Հասոի տուած մեծամեծ միասնները և ունեցած անամօթ ու խաբեբայ ընթացքը ամբողջովին ծանօթ են իրիկեցիներու և մասնաւորապէս Զէյթունցիներու համար: Նա ուրիշ ծանր յնցանքներ ալ ունի, որոնք առ այժմ անյարմար կը համարեմ այստեղ յիշել: Զէյթունցիներու քաջ յայտնի է, որ Մարաշ և Հաճին քաղաքները Զէյթունցի ապստամբներու կողմէ գրաւելուն ամեն կերպ արգելքներ ստեղծեց՝ իր անձնական, ինչ-ինչ դիտումներու պատճառաւ: Գէպի Հաճին ապստամբներու մեկնող ահաբեկին բանակը մէկ օրուայ ճանապարհէն վատաբար խաբելով յետ բերել քուտա՝ խիստ զայրոյթ պատճառելով ապստամբներուն:

Մենք մեր պարտականութիւնը կը համարենք հրապարակել անոր ունեցած միասնակար ընթացքները և կը յայտարարենք, որ 1895 և 1896 թ. թ. յէնչակի մի քանի համարներու մէջ զետեղած իր թըղթակցութիւններու մէջ (Զէյթունի մասին) ինչ-ինչ անձիշտ կէտերու հետ ամբողջովին ստուծութիւններ են իր անձին վերաբերեալ կտորները:

ԱԵՅԹՈՒՆՑԻ Կ.

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԿՐԵՏԷ. ԵՐՐՈՊԵԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

— Փետրվար 18. Յունական բանակները երէկ գրաւեցին Ալիայի բերդը և գերի բռնեցին 400 մահմետականներ, որոնց 100-ը թրքական զինուորներ էին: Յոյն հրամանատար գնդապետ Վասսոս մի յայտարարութիւն ցրուեց, որով յանուն Գէորգ Թագաւորի, իրէտէի գրաւումը կը հռչակէ, երաշխաւորելով միանգամայն կեանքի, պատւի, կրօնի և գոյքի ազատութիւն:

— Փետրվար. 22. Շաբաթ օր իրէտական ջոկերը գանձող օտար մարտանաւերի Ծովակալները մի վերջագիր ուղարկեցին Պլատանիա՝ յոյն հրամանատարին և սպառնացան կրակ անել, եթէ իր յունական զինուորները կամ իրէտացի ապստամբները փորձեն մօտենալ Կանէային: Հակառակ գնդապետ Վասսոսի յայտարարութեան, թէ ինք Կանէայի վրայ յարձակելու մըտադիր չէ, երէկ իրէտացի ապստամբները յարձակում գործեցին թիւրքերի վրայ: Բրիտանական և ուրիշ մարտանաւեր անմիջապէս ռմբակոծել սկսան ապստամբների դիրքերը: Իրէտացիները չը պատասխանեցին այս կրակին: Ապստամբները յոյն զինուորների հետ միացած՝ գրաւեցին Վուքուլիսի բերդը: Բրիտանական մի տորպիլակիր դարձեալ ձերբակալեց յունական մի նաւ և Կանէա տարաւ: Խալիլիայի, Անգլիայի և Ֆրանսիայի ժողովուրդները մեծամեծ ցոյցերով իրենց համակրութիւնը կը յայտնեն իրէտացի ապստամբներին և յոյն ժողովրդին և կը դատապարտեն իրենց կառավարութիւններին բռնած հակամարդկային քաղաքականութիւնը:

— Մարտ 3. Պետութիւնների ներկայացուցիչները երէկ համանման մի մի Նոտա հաղորդեցին յոյն կառավարութեան, որով կը յայտարարեն թէ՛ 1) իրէտէն կատարելապէս ինքնավար մի երկիր պիտի լինի՝ սուլթանի գերիշխանութեան տակ, և 2) Կառարկեն որ Յունաստանը ետ կանչէ իրէտէն իր նաւատորմը ու

բանակը, որի համար վեց օր պայմանաժամ կը տրուի: Երէկ նոյնպէս Կ. Պօլսի զեսպանները հաւաքական մի Նոտա մատուցեցին Բ. Դրան:

— Մարտ 4. Թիւրք կառավարութեան տրուած Նոտայի մէջ թիւրք զինուորներու իշխան հեռանալու մասին ոչ մի յիշատակութիւն չը կայ: Այս իրողութիւնը ամեն տեղ և մասնաւորապէս Աթէնքի մէջ մեծ զարմանք է պատճառած. իսկ եւրոպական հասարակութեան մէջ մեծ զայրոյթ առաջացած է: Ամեն կողմէն կամաւորներ կը դիմեն Յունաստան իրէտէ անցնելու համար: Սինեօր Բիչիօտի Գարիբալդի 1,000 կամաւորներով պատրաստուած է յոյներին օգնելու, իսկ Աիկիլիայէն մի խումբ կամաւորներ արդէն ճանապարհ ընկած են դէպի Աթէնք. նոյնպէս մի խումբ Ֆրասացիներ և մի խումբ Անգլիացիներ: Ռուսաստանի, Եգիպտոսի և Ամերիկայի յոյները մեծամեծ գումարներ կուղարկեն Յունաստան՝ ապստամբութեան համար: Միայն Անգլիոյ Յոյները այս նպատակի համար հանգանակած են 6 միլիօն ֆրանք, իսկ Մարսէյէն 10 միլիօն ֆր: Ավերով անունով մի յոյն տված է իր ամբողջ կարողութիւնը՝ հարկւր միլիօն ֆրանկ:

— Մարտ 9. Եւրոպական Նոտայի դէմ Թիւրքիոյ տուած պատասխանը ստացուած է: Թրքական կառավարութիւնը գոհունակութիւն յայտնած է այն կէտի մասին՝ թէ մեծ Պետութիւնները կերաշխաւորեն պահպանել օսմ. Կայսրութեան ամբողջութիւնը, կրնգունի եւրոպական առաջարկները իրէտէի նկատմամբ, ի բաց առեալ իրէտական ինքնավարութեան ձեւի մի քանի մանրամասնութիւններէ, որոնց մասին դիտողութիւններ ունի եղբի: Ստացուած է նաև Յունաստանի պատասխանը, որով կառաջարկէ, թէ իւր զինուորների իրէտէն հանելը, քանի գեռ կղզիի մէջ կը գտնուին թրքական զինուորները, նշան պիտի լինի խռովութիւնների վերսկսելուն: Յունաստանը չը համաձայնիր իր զօրքերը ետ կանչել, իսկ նաւատորմը յետ պիտի տանի, եթէ Եւրոպացիք երաշխաւորեն իրենց մարտանաւերով, թէ Թիւրքիան նոր զօրութիւն չը պիտի մըտցնէ Կ զղին:

Լօնդօնի "The Daily Chronicle" թերթի մարտ 11 երկուսի համարում առաջ է բերված ներկայ տարւայ "Հնչակ" N° 2-ի առաջնորդող գրեթէ ամբողջութեամբ, անուանելով յայն "ճարտարախօս" (e loquent) և ընդունելով իբրեւ հայկական հայեցակէտ:

*

«ԱՊՏԱԿ»

ԵՐԳԻԺԱՐԱՆԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
(ՄԻԱՄՍԵԱՅ)

Լոյս է տեսել "Ապտակի" ներկայ տարեշրջանի N° 10: նկար. — Միջալին երկու երեսները: Բովանդակութիւն. — Ամիսը. — Վատեր. — Ար. Արփիարիանի "Միջալայագիրն" առ սուլթան. — Տիեզերական Ապստամբութիւն. — Աշխարհագրակ. քաղաքական քառարան:

Յօգուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանգատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].